***289. ԽԱՉՔԱՐ,*** *մեծ և գեղաքանդակ, կանգնած է գյուղի հյուսիս-արևմըտյան եզրին, բլրակի վրա. քիվին և խաչի վերին մասերում 3 տող.*

ԱՅՍԽԱՉՍՔՄԻԼԵՄԴՄՐԿԱԾԷ



ԱՅՍ ԽԱՉՍ ՔԱՐ ԱՐԵ|Ա|ՄԳ ՍՐԿԱԾ Է:
ԹՎ. :ՉԻԶ: (1277):

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Ա, 49։ Ալիշան, 129։ Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 40։* Լուսանկ. 114

***290. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ,*** *կանգնած է գյուղի հարավ-արևմտյան եզրին, «Վարդանի բերդի» մոտ. շրջանակներին և խաչի շուրջը.*



:ՉԿ: (1311) ԻՇԽԱՆՈՒԹԻ. ՊԱՐՈՆ ՉԵՍԱՐԻՆ. ԿԱՄ|ԱԻՆ| ՆԾ. ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԵՍ ՎԱՐԴԱԼԱՀ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՈՎ ԿԱՐ|ԴԷ|Ք ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԷՔ:

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 40։* Լուսանկ. 115

***291. ԽԱՉՔԱՐ,*** *երեք աստիճանավոր պատվանդանի վրա, գտնվելիս է եղել գյուղի հյուսիսում գտնվող գերեզմանատանը. ճակատին 1 տող.*

Ի թվ. :ՉՀԷ: (1328) այս է հանգիստ Գրիգորի.

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Ա, 49։ Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 40։ Ալիշան, 129։*

***292. ԽԱՉՔԱՐԻ*** *վրա, նախորդի մոտ.*

Հանգիստ բէկի Խաթունին որ կիսաւէնայ փոխեցաւ ի Քս.
թվին :ՉՃ: (կամ :ՉԾ).

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 50—51։ Քաջբերունի, Արարատ, 1889, Ա, 49 (միայն թիվը՝ ՉՂԲ)։*

**293.** *Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ եկեղեցու արևմտյան պատին, արտաքուստ, ագուցված մաշված խաչքարի տակին.*

ԷՑԻՔ ........ՎՐԿՈ
ԹԻՀՈԴՈՅՆՀԱՐՆՄ
ՄԱՐՆՄԱՁԻՁԻՆ

. . ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՑՆ ՀԱՒՐՆ ԻՄ [ . . ] ԵՒ ՄԱՒՐՆ ԻՄ ՄՕՆՕՁԻՆ:

Լուսանկ. 116

**294.** *Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ եկեղեցու ներսում, ավագանի գլխին.*

Շնորհիւ ամենազօրին Աստուծոյ, հաւր և որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, ի թուոջ մարդեղութեան բանին Աստուծոյ :ՌՈՂԲ:, ի հայկական տումարի :ՌՃԽԱ:, շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի:
Կանգնեցաւ աւազանս մկրտութեան հոգւոյ և թողութեան մեղաց,
վարդավառի երկուշաբթի աւրն, յուլիս ամսոյ քսանին:

Ծանոթ. *Այս արձանագրությունը անձամբ չենք ստուգել։*

*Հրատ. Ջալալեանց, 163։ Ալիշան, 129։*

## 20. ՄԻԿՈՅԱՆ (ՔԵՇԻՇՔԵՆԴ)

*Այս գյուղի հին անունն այժմ շփոթվել և մոռացվել է։ Բաշբևրունին գրում է, որ տեղացիք Քեշիշքենդին Փոնձաթաղ անունն են տալիս ասելով—«հնասեր անձանց խոսքերից»[1]։ Նույնը ենթադրաբար կրկնում են նաև Ալիշանը[2], Հովսեփյանը[3] և Լալայանը[4]։ Բայց մենք ապացուցել ենք, որ գյուղի հին անունը եղել է Խստորայեզ[5]։*

*Ստ. Օրբելյանը տեղական արձանագրություններ, գրավոր աղբյուրների և անդրագրական այլ նյութերից քաղելով պատմում է, որ Վարդանանց նահատակությունից հետո, հայկական մի գունդ նահանջում էր դեպի «լյամար աշխարհն Արձախայ». պարսից զորքը վրա է հասնում Վայոց ձորում, Մոզի և Եղեգյաց գետերի միջև գտնվող, մեծամեծ քարերով պարսպված բլրաբերդի մոտ։ Ընդհարումը վերջանում է հայ գնդի պարտությամբ. շատերը նահատակվում են, մնացածները խուսափում են Եղեգիս գետն ի վեր և մի քանի անգամ ընդհարվում հետապնդողների հետ՝ Շատին գյուղի մոտ, Անգեղձորում և Ռոտինք ու Արտաբույնք գյուղերի մոտ։*

*Բլրաբերդի մոտ, առաջին անգամ նահատակվածների վրա Գյուտ կաթողիկոսի հրամանով շինվում է վկայարան «Կանգնեցին ճեմարան իմն երկնանման հրաշաքարտար շինուածովք երկագմբէթս և եռախորանս. և երկուց կողմանէ գաւիթս և սրահակս, վերնատունս սեամբք և աքանչելի յօրինուածովք շինեալ.....բայց այժմ լեռ ասերման տեղւոյն եղև շինանիստ գեղջըկաց, և կոչեցաւ տեղին Խոտորայէզ»[6]։*

*Պատմագրի հիշատակած Եղեգիս գետը հայտնի է, իսկ Մոզի գետ ասելով պարզ է, որ հասկացել է Արփա գետը։ Այդ երկու գետերի միացումից առաջացող եռանկյունու վրա գտնվում է ներկա Միկոյան գյուղը, իսկ նրա հարավային եզրին գտնվող բլրի գլխին այժմ էլ*

---

[1] *«Արարատ», 1889, էջ 32։*

[2] *«Սիսական», էջ 129։*

[3] *«Խաղբակյանք», Ա, էջ 41 և 237։*

[4] *«Ազգ. Հանդ.», XII, էջ 272։*

[5] *«Տեղեկագիր» պատմության և գրականության ինստիտուտի, № 1 1936 թ.—V դարի երկու. հուշարձան Սյունիքում։*

[6] Ստ. Օրբելեան, *Պատմութիւն, գլխ. ԺԹ,*